ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 200

10 հուլիս 2017թ.

ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 158-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005թվականի օգոստոսի 11-ի N 1384 որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Համայնքի ղեկավարի տեղակալ Գարիկ Հայրապետյանին տրամադրել 2016 թվականի վճարովի արձակուրդից 14 աշխատանքային օր՝ 2017 թվականի հուլիսի 12-ից մինչև 2017 թվականի հուլիսի 31-ը ներառյալ:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 201

12 հուլիս 2017թ.

ԱՐՄԵՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Արմեն Սերյոժայի Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական N 29122016-07-0043), քաղաք Ծաղկաձոր, Պահլավունյաց փողոց, թիվ 88/2 հասցեում գտնվող 0.1հա մակերեսով հողամասի բաժանման հետևանքով առաջացած 0,05 հա մակերեսով հողամասին (համաձայն բաժանման հատակագծի) տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Ծաղկաձոր, Պահլավունյաց փողոց, թիվ 88/4, իսկ մնացած՝0.05 հա մակերեսով հատվածի հասցեն թողնել նույնը՝քաղաք Ծաղկաձոր, Պահլավունյաց փողոց, թիվ 88/2:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 202

12 հուլիս 2017թ.

<<ԲԻ ԸՆԴ ԲԻ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀՅՈՒՐԱՆՈՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքապետարան է դիմել <<ԲԻ ԸՆԴ ԲԻ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն՝ Լևոն Բաղդասարյանը իրեն սեփականության իրավունքով պատկանող տարածքում հյուրանոցի կառուցման աշխատանքները կատարելու համար շինարարության թույլտվություն ստանալու խնդրանքով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. <<ԲԻ ԸՆԴ ԲԻ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տալ հյուրանոցի կառուցման աշխատանքների շինարարության թույլտվություն:
2. Համայնքապետարանի քաղաքաշինության գլխավոր մասնագետին ապահովել հյուրանոցի կառուցման աշխատանքների իրականացման համար, գործող կարգին համապատասխան անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպում և պատշաճ հսկողություն:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ